



## “Բելառուսի Ֆուտբոլի Ֆեդերացիա” Ասոցիացիայի ակումբների արտոնագրման համակարգը



Բելառուսի Հանրապետությունում ֆուտբոլային ակումբների արտոնագրման համակարգի ներդրման վերաբերյալ որոշումը կայացվեց 2002թ-ին: Նույն տարի ԲՖՖ-ի Գործադիր կոմիտեն կայացրեց որոշում կիրառել ակումբների արտոնագրումը ոչ միայն ՈԻԵՖԱ-ի ակումբային մրցաշարերի, այլև ազգային բարձրագույն խմբի առաջնությանը մասնակցող ակումբների նկատմամբ:

Այդ որոշումը պայմանավորված էր մի կողմից հնարավորինս շատ ակումբների գործունեության որակները բարձրացնելու ԲՖՖ -ի ղեկավարության ցանկությամբ, իսկ մյուս կողմից՝ ակումբների բարդ ֆինանսա-տնտեսական իրավիճակով, ինչպես նաև ակումբների կողմից այդ նոր համակարգի չըմբռնմամբ եւ չճանաչմամբ:

Այդ որոշումների կայացմանը նախորդել էր ԲՖՖ-ի ակումբների արտոնագրման համակարգի Կանոնակարգի նախապատրաստման եւ տպագրման երկարատեւ աշխատանքը, ինչպես նաև արտոնագրման նպատակներին վերաբերող բացատրական միջոցառումների անցկացումը: Այսպես, բարձրագույն, 1-ին եւ 2-րդ խմբերում հանդես եկող ակումբների ղեկավարների հետ առաջին հանդիպումը կայացավ դեռ 2001թ-ի նոյեմբերին: Բացի ակումբների ղեկավարներից այդ խորհրդակցությանը մասնակցեցին նաև տեղական (ռեգիոնալ) ֆուտբոլի ֆեդերացիաների նախագահներն ու թիմերի գլխավոր մարզիչները:

Արտոնագրային առաջին շրջանում ամենամեծ խնդիրներն առաջացան ակումբների կողմից ենթակառուցվածքային չափանիշի կատարման պարագայում. 2004թ-ին չորս մարզադաշտ զրկվեց բարձրագույն խմբի առաջնության հանդիպումներ հյուրընկալելու իրավունքից:

2005թ-ի արտոնագրային մրցաշրջանում մենք բախվեցինք եւս մեկ խնդրի. բարձրագույն խմբում հանդես գալու իրավունք նվաճած 1-ին խմբի ակումբները գտնվեցին անպատրաստ արտոնագրմանը:

Ստեղծված իրավիճակի շտկման նպատակով 2005թ-ի գարնանը ԲՖՖ-ն անցկացրեց հարցում 1-ին խմբի ակումբների միջեւ՝ նրանց կողմից արտոնագրման համակարգի պահանջների կատարման հնարավորությունները պարզելու նպատակով: Ստացված տեղեկությունների հիման վրա կազմվեց արտոնագրման կանոնակարգին համանման մի փաստաթուղթ, բայց ավելի մեղմ չափանիշներով:

Այդպիսով, սկսած 2006թ-ից արտոնագրման ընթացակարգերն անցնում են բարձրագույն եւ 1-ին խմբերի բոլոր ակումբները:

Արտոնագրման համակարգի իրագործման հարցում եւս մեկ կարեւորագույն իրադարձություն էր ֆինանսական չափանիշում կատարված փոփոխությունները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ յուրաքանչյուր ակումբ պայմանագիր էր կնքում առանձին աուդիտորական ընկերության հետ, շատ բարդ էր լինում ֆեդերացիայի պահանջները ի գիտություն հասցնել յուրաքանչյուր աուդիտորին. ակումբների ֆինանսատնտեսական գործունեության գնահատման մոտեցումները տարբերվում էին: Որպես արդյունք, աուդիտորական եզրակացությունների որակը ոչ միշտ էր համապատասխանում ԲՖՖ-ի պահանջներին:

ԲՖՖ-ի վարչակազմի առաջարկով Գործադիր կոմիտեն կայացրեց որոշում՝ 2009թ-ի արտոնագրային մրցաշրջանից կենտրոնացված երկփուլային աուդիտորական ստուգումների անցկացման վերաբերյալ:

Նման որոշման ընդունումը մի կողմից ապահովեց.

1. աուդիտների անցկացումը՝ ըստ ԲՖՖ-ի պահանջների
2. ֆուտբոլային ակումբների իրավիճակի օբյեկտիվ գնահատականի ստացում:

Մյուս կողմից՝ ֆուտբոլային ակումբներն ազատվեցին աուդիտի անցկացման հետ կապված ֆինանսական ծախսերից, ինչպես նաև խախտումների հայտնաբերման պարագայում ակումբներն ունենում են անհրաժեշտ ժամանակ՝ մինչև արտոնագրային ընթացակարգը դրանք շտկելու համար:

Ակումբների գնահատման համակարգի կատարելագործման նպատակներից ելնելով՝ կազմվել է Արտոնագրման համակարգի փորձագետի մասին դրույթը, որում հստակեցված են փորձագետների նկատմամբ պահանջները, նկարագրված են իրենց իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև սահմանվել է պատասխանատվության չափը պարտականությունների ոչ բարեխիղճ կատարման դեպքում:

Ընդհանուր առմամբ արտոնագրման համակարգի ներդրումը թույլ տվեց.

1. զգալիորեն բարելավել մարզադաշտերի եւ ակումբների ուսումնամարզական բազաների ենթակառուցվածքները

2. ակումբներում ստեղծել պատանի ֆուտբոլիստների պատրաստման սեփական խմբեր՝ սկսած 6-8 տարեկաններից

3. կազմակերպել հանրապետական մանկապատանեկան մրցումների համակարգ 4 տարիքային խմբերում

4. բարձրացնել կառավարչական աշխատանքի որակն ակումբներում

5. ապահովել ակումբները բարձրակարգ մարզչական կադրերով:

Ներկա փուլում արդեն որեւէ մեկը կասկած չունի ակումբների արտոնագրման համակարգի կիրառման առավելությունների վերաբերյալ: Արտոնագրման համակարգը հանդիսանում է այն հիմնաքարերից մեկը, որոնք ապահովում են բելառուսական ֆուտբոլի շարունակական զարգացումը:

Յուրաքանչյուր տարի ԲՖՖ-ն անցկացնում է արտոնագրման համակարգի կենսագործունեության վերլուծություն, որի հիման վրա որոշում է այս կամ այն չափանիշներով պահանջների բարձրացման կամ նոր չափանիշների կիրառման հրատապությունը:

Բացի այդ, նպատակ ունենալով պարզաբանել նոր պահանջները, ինչպես նաև քննարկել ակումբներում առկա խնդիրները, ԲՖՖ-ն անցկացնում է ամենամյա հանդիպումներ բարձրագույն եւ 1-ին խմբերի ակումբների ղեկավարների, գլխավոր հաշվապահների եւ արտոնագրման հարցերով պատասխանատուների մասնակցությամբ արտոնագրման հարցերի վերաբերյալ:

Արտոնագրման համակարգի զարգացման կարելուրագույն տարր է հանդիսանում փորձի մշտական փոխանակման հնարավորությունը տարբեր ազգային ասոցիացիաների միջև: Առաջին հերթին այդ ուղղությամբ զգալի խթան են հանդիսանում ՈԻԵՖԱ-ի կողմից անցկացվող ամենամյա խորհրդակցությունները:

Միաժամանակ շատ արդյունավետ են փորձի փոխանակման նպատակով իրականացվող այցերն այլ ասոցիացիաներ: Դրանք թույլ են տալիս ոչ միայն ուսումնասիրել արտոնագրման համակարգի ներդրման փորձն այլ երկրներում, այլև իմանալ նրանց ազգային յուրահատկությունների եւ ֆուտբոլի զարգացման ուղիների մասին ընդհանրապես:

**Վիտալի Կարնաուշենկո**  
**ԲՖՖ-ի Արտոնագրման բաժնի պետ**